ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՖԻԶԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ֆիզիկա ուսումնական ստորաբաժանում

ՏԵՍԱԿԱՆ ՖԻԶԻԿԱ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՄԵԼԻՔ ՄՈՒՇԵՂԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ

ԲԱՐՁՐ ՍՊԻՆՈՎ ԴԱՇՏԵՐԻ ԽՈՐԱՆԱՐԴԱՅԻՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ AdS_{d+1} ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲԱՑԱՀԱՅՏ ԿՈՎԱՐԻԱՆՏ ՏԵՍՔՈՎ

«Տեսական ֆիզիկա» մասնագիտությամբ մագիստրոսի որակավորման աստիճանի հայցման համար

ԵՐԵՎԱՆ 2020

Ուսանող՝ ____________________________________

ստորագրություն

Մելիք Կարապետյան

ազգանուն, անուն

Գիտական ղեկավար՝ ____________________________________

ստորագրություն

ֆ.մ.գ դոկտոր՝ Ռուբեն Մանվելյան

ազգանուն, անուն

«Թույլատրել պաշտպանության»

Ամբիոնի վարիչ՝ ____________________________________

ստորագրություն

ֆ.մ.գ դոկտոր, պրոֆեսոր՝ Արամ Սահարյան

ազգանուն, անուն

«   » Մայիս, 2020թ.

Բովանդակություն

1 Աբստրակտ

Այս աշխատանքը ուսումնասիրում է բարձր սպինային փոխազդեցության հիմնական անդամների կապը $d+2$ հարթ և AdS_{d+1} կոր տարածություններում, որը արտահայտվում է AdS_{d+1} տարածության կովարիանտ ածանցյալներով և կորության ուղղումներով: Աշխատանքում լուծվում են բոլոր անհրաժեշտ ռեկուրենտ հավասարումներն, և ավարտին է հասցվում բարձր սպինային խորանարդային փոխազդեցության հիմնական անդամի ռադիալ պրոեկտման ($Radial \quad pullback$) պրոցեդուրան՝ $d+2$ տարածությունից AdS_{d+1} տարածություն: Ռեկուրենտ հավասարումների ոչ տրիվյալ լուծումներն հնարավորություն են տալիս AdS_{d+1}-ում ստանալ փոխազդեցության բոլոր անդամներն՝ ներառյալ հետքեր և դիվերգենցիաներ պարունակող անդամներն:

2 Ներածություն

Փոխազդող Բարձր Սպինային(ԲՍ) տրամաչափային տեսությունների կառուցումը մեծ հետաքրքրություն է սկսել առաջացնել ավելի քան 30 տարի առաջ [52] : Պարբերաբար կարելի է տեսնել աճող հետաքրքրություն այս թեմայի շուրջ: Արվում են բազմաթիվ փորձեր կապելու AdS_{d+1} կամ հարթ տարածության խորանարդային փոխազդեցությունը AdS/CFT-ի և ԲՍ գրավիտացիայի հետ տարբեր չափողականություններում: Այս փորձերը միշտ եղել են գրավիչ այն իմաստով, որ հանդիսացել են որպես ալտերնատիվ տարբերակ կապելու քվանտային տեսությունը Հարաբերականության հատուկ տեսության հետ, ուսումնասիրելու ԲՍ տրամաչափային դաշտերն գրավիտացիային զուգահեռ և հասկանալու գրավիտացիայի դերը և յուրահատկությունը համեմատած ԲՍ եռարխիայի այլ դաշտերի հետ: Քանի որ այս աշխատանքում ուսումնասիրվում է խորանարդային փոխազդեցությունը, հարկ է նշել որ, չնայած այն բանի որ փոխազդող ԲՍ դաշտերի շարժման հավասարումներն հայտնի են երկար տարիներ [2] , այդ տեսությունների փոքրագույն գործողության սկզբունքը մնում է անհայտ: Փոխազդող լագրանժիան կառուցելու ստանդարտ մեթոդը կայանում է նրանում, որ պետք է զարգացնել Ֆրոնզդալի ֆորմալիզմը [10] ազատ դաշտերի համար: Այս ամենի կարևոր կետը կայանում է նրանում, որ երբ կատարում ենք ազատ դաշտերի պերտուրբատիվ դեֆորմացիա Նյոտերի մեթոդով, ապա դրան զուգահեռ ստանում ենք նաև այդ դաշտերի տրամաչափային ձևափոխությունների դեֆորմացիաներ և այլ բարդությունների՝ կապված տեսության լոկալության հետ, որը առաջանում է խորանարդային կարգից ավելի բարձր անդամներում:(տես [11]-[16]): Խորանարդային փոխազդեցությունը մինչև այժմ հանդիսանում է ԲՍ փոխազդեցությունների կառուցման հիմնական միավորը: Հարկ է նշել որ, չնայած այն բանի որ, խորանարդային փոխազդեցությունը AdS տարածությունում ուսումնասիրվել է տարիներ առաջ [42]-[46], սակայն AdS_{d+1} կովարիանտ ածանցյալների լեզվով շարադրված տեսությունը հայտնի չէ մինչ այժմ: Մյուս կողմից Նյոտերի պրոցեդուրան AdS-ում բավականին դժվար է, քանի որ այնտեղ կովարիանտ ածանցյալներն կոմուտատիվ չեն: Հետևաբար միակ տարբերակը գտնելու այս փոխազդեցությունը AdS-ում դա օգտագործելն է [46]-ում առաջարկվող մեթոդը:

Աշխատանքի հիմնական նպատակն է [46] ռադիալ պրոեկցման ($Radial\quad pullback$) ֆորմալիզմի միջոցով ստանալ խորանարդային փոխազդեցությունը AdS_{d+1}-օգտագործելով համապատասխան փոխազդեցությունը $d+2$ տարածությունում: [46]-ում փոխազդեցության անդամներն ներկայացված են AdS_{d+1}-ի կովարիանտ ածանցյալներով: Այդ ամենը արված է միայն հիմնական անդամի և հետք չպարունակող կորության ուղղումների համար:

Այս աշխատանքում հաջողվել է լուծել բոլոր անհրաժեշտ ռեկուրենտ հավասարումներն և ներկայացնել փոխազդեցությունը AdS_{d+1}-ում ներառյալ բոլոր կարգի կորության ուղղումներն, բոլոր հեփքերով: Մյուս կարևոր կեպը այն է, որ կառուցվել է ռադիալ պրոեկցման մեթոդ որը թույլ է փալիս ԲՍ փրամաչափային դաշտերի բարձր կարգի ածանցյալներ պարունակող անդամներ $d+2$-ից փանել AdS_{d+1}:

3 Ռադիալ պրոեկցման ($Radial \quad pullback$) մեթոդը և ազատ ԲՍ տրամաչափային դաշտերը AdS-ում

Այս բաժնում կարճ կներկայացնենք ռադիալ պրոեկցման ($Radial \quad pullback$) մեթոդը, որը կառուցվել է [48, 49] և օգտագործվել ազատ ԲՍ դաշտերի դեպքի համար [46]-ում:

Դիտարկենք d+2 չափանի հարթ տարածություն X^A կոորդինատներով և հարթ $SO(1, d$+$1)$ ինվարիանտ մետրիկայով:

$$X^A \quad A = 1, 2, \dots . d + 2, \tag{3.1}$$

$$ds^2 = \eta_{AB} dX^A dX^B = -(dX^{d+2})^2 + (dX^{d+1})^2 + dX^i dX^j \eta_{ij}, \tag{3.2}$$

Որպեսզի կառուցենք Էվկլիդյան AdS_{d+1} հիպերսֆերան այս տարածության մեջ, մտցնենք հետևյալ կորագիծ կոորդինատական ձևափոխությունները՝ $X^A \to (u, r, x^i)$:

$$\begin{aligned} X^{d+2} &= \frac{1}{2} e^u [r + \frac{1}{r}(L^2 + x^i x^j \eta_{ij})], \\ X^{d+1} &= \frac{1}{2} e^u [r - \frac{1}{r}(L^2 - x^i x^j \eta_{ij})], \\ X^i &= e^u L \frac{x^i}{r}, \end{aligned} \tag{3.3}$$

$$-e^{2u} L^2 = -(X^{d+2})^2 + (X^{d+1})^2 + X^i X^j \eta_{ij}, \tag{3.4}$$

$$ds^2 = L^2 e^{2u} [-du^2 + \frac{1}{r^2}(dr^2 + dx^i dx^j \eta_{ij})]. \tag{3.5}$$

Դնելով $e^u = 1$ պայման, կոորդինատական ձևափոխությունների փոխարեն ստանում ենք $d + 2$ տարածության պրոեկցիան AdS_{d+1}-ի վրա հետևյալ լոկալ կոորդինատներով՝ $x^\mu = (x^0, x^i) = (r, x^i)$: Այլ կերպ ասած կարող ենք սահմանել ձևափոխության յակոբիանը հետևյալ կոմպակտ տեսքով՝

$$E^A_\mu(u, x^\nu) = \frac{\partial X^A}{\partial x^\mu} = e^u e^A_\mu(x^\nu), \tag{3.6}$$

$$E^A_u(u, x^\nu) = \frac{\partial X^A}{\partial u} = X^A(u, x^\nu) = e^u L n^A(x^\nu), \tag{3.7}$$

որտեղ (3.4)-ից հետևում է որ փանգենցյալ՝ $\{e^A_\mu(x)\}^d_{\mu=0}$ և նորմալ՝ $n^A(x)$ վեկտորներն բավարարում են հետևյալ առնչություններին՝

$$n^A(x) e^B_\mu(x) \eta_{AB} = 0 \tag{3.8}$$

$$n^A(x) n^B(x) \eta_{AB} = -1 \tag{3.9}$$

AdS_{d+1} փարածության համար, սահմանենք ինդուկցված մետրիկա $g_{\mu\nu}(x)$ և կորություն՝ $K_{\mu\nu}(x)$

$$g_{\mu\nu}(x) = e^A_\mu(x) e^B_\nu(x) \eta_{AB} = \left(\frac{L}{x^0}\right)^2 \delta_{\mu\nu} \tag{3.10}$$

$$\partial_\mu e^A_\nu(x) = \Gamma^\lambda_{\mu\nu}(g) e^A_\nu(x) + K_{\mu\nu}(x) n^A(x) \tag{3.11}$$

որտեղ՝

$$\Gamma^\lambda_{\mu\nu}(g) = \Gamma^{\lambda(AdS)}_{\mu\nu} = \frac{1}{2} g^{\lambda\rho} \left(\partial_\mu g_{\nu\rho} + \partial_\mu g_{\nu\rho} - \partial_\rho g_{\mu\nu}\right), \tag{3.12}$$

$$K_{\mu\nu} = \frac{g_{\mu\nu}}{L} \tag{3.13}$$

Այսփեղից երևում է, որ $\Gamma^\lambda_{\mu\nu}(g)$-ները սովորական Կրիսփոֆելի սիմվոլներն են AdS_{d+1} -ում և հեփևաբար կարելի է սահմանել կովարիանփ ∇_μ ածանցյալներ այդ փարածությունում և (3.10) գրել հեփևյալ փեսքով՝

$$\nabla_\mu e^A_\nu(x) = K_{\mu\nu}(x) n^A(x) \tag{3.14}$$

$$K_{\mu\nu}(x) = e^A_\nu(x) \partial_\mu n_A = -n_A \nabla_\mu e^A_\nu(x) \tag{3.15}$$

Որպեսզի սահմանափակենք մեր $d+2$ հարթ փեսությունը AdS_{d+2} հիպերսֆերայի վրա, պետք է նախ և առաջ ներկայացնել $d+2$ փեսությունը կորագիծ կորդինատներով և հետևյալ հարթ մետրիկայով՝ $e^{2u}(AdS_{d+1} \times \mathcal{R}_u)$

$$ds^2 = e^{2u}[-L^2 du^2 + g_{\mu\nu}(x) dx^\mu dx^\nu] = G_{uu}(u) du^2 + G_{\mu\nu}(u,x) dx^\mu dx^\nu, \tag{3.16}$$

որտեղ

$$G_{uu}(u) = E^A_u(u,x^\nu) E^B_u(u,x^\nu) \eta_{AB} = X^A X_A = -L^2 e^{2u} \tag{3.17}$$

$$G_{\mu\nu} = E^A_\mu(u,x^\nu) E^B_\nu(u,x^\nu) \eta_{AB} = e^{2u} g_{\mu\nu}(x) \tag{3.18}$$

այնուհետև պետք է սահմանել ճիշտ ալգորիթմ, որով հնարավոր կլինի անցում կատարել հետևյալ յակոբիանով տրված E^A_u, E^A_μ հարթ կորագիծ տարածությունից դեպի համապատուն բացասական կորություն ունեցող տարածություն: Ճանապարհին պետք է ազատվել նորմալ n^A-ի ուղղությամբ կոմպոնենտներից: Սա անելու համար նախ սահմանենք դիֆերենցման կանոնները Ֆրենե բազիսի համար օգտագործելով (3.13)-(3.15)

$$\nabla_\mu e^A_\nu(x) = \frac{g_{\mu\nu}(x)}{L} n^A(x) \tag{3.19}$$

$$\partial_\mu n^A(x) = \frac{1}{L} e^A_\mu(x), \tag{3.20}$$

Հաշվելով կովարիանտ ածանցյալների կոմուտատորը, կստանանք Ռիմանի կորությունը և Ռիչի թենզորը:

$$[\nabla_\mu, \nabla_\nu]e^A_\lambda = R_{\mu\nu,\lambda}{}^\rho e^A_\rho = K_{\lambda[\nu}K^\rho_{\mu]}e^A_\rho \tag{3.21}$$

$$R_{\mu\nu,\lambda}{}^\rho = -\frac{1}{L^2}(g_{\mu\lambda}\delta^\rho_\nu - g_{\nu\lambda}\delta^\rho_\mu) \tag{3.22}$$

$$R_{\mu,\lambda} = -\frac{d}{L^2}g_{\mu\nu}, \quad R = g^{\mu\lambda}R_{\mu\lambda} = -\frac{d(d+1)}{L^2} \tag{3.23}$$

ԲՍ դաշտերի հետ ավելի հեշտ աշխատելու համար մտցնենք հետևյալ նշանակումներն՝ բոլոր $h^{(s)}_{A_1A_2\ldots A_s}(X)$ տեսքի սիմետրիկ թենզորների փոխարեն կօգտագործենք հետևյալ բազմանդամներ

$$h^{(s)}(X;a) = \sum_{A_i}(\prod_{i=1}^{s} a^{A_i})h^{(s)}_{A_1A_2\ldots A_s}(X). \tag{3.24}$$

Այնուհետև կարող ենք արտահայտել սիմետրիզացված գրադիենտը, հետքը և դիվերգենցիան: [1]

$$Grad : h^{(s)}(X;a) \Rightarrow Gradh^{(s+1)}(X;a) = a^A\partial_A h^{(s)}(X;a), \tag{3.25}$$

$$Tr : h^{(s)}(X;a) \Rightarrow Trh^{(s-2)}(X;a) = \frac{1}{s(s-1)}\Box_a h^{(s)}(X;a), \tag{3.26}$$

$$Div : h^{(s)}(X;a) \Rightarrow Divh^{(s-1)}(X;a) = \frac{1}{s}\eta^{AB}\partial_A\partial_{a^B}h^{(s)}(X;a). \tag{3.27}$$

Այնուհետև սահմանենք հետևյալ նշանակումներն՝ $\overset{s}{*}_a, \overset{s}{*}_b, \ldots$ թենզորների սիմետրիկ a կամ b ինդեքսներով փաթույթների համար

$$\overset{s}{*}_{a^A} = \frac{1}{(s!)^2}\prod_{i=1}^{s}\overleftarrow{\partial}_{a^{A_i}}\eta^{A_iB_i}\overrightarrow{\partial}_{a^{B_i}}. \tag{3.28}$$

Որպեսզի կատարենք ճիշտ անցում հարթ տարածությունից դեպի մեկ չափողականություն ավելի փոքր AdS տարածություն, նախ ֆիքսենք երկու կարևոր կետ՝

- Պետք է ֆիքսել $d+2$ տարածության ԲՍ դաշտի անզացը այնպես որ, ստանանք մեկ s սպինով դաշտից ճիշտ մեկ s սպինով դաշտ AdS_{d+1}-ում. Վերջինս բավարարելու համար բնական է զրոյացնել ներդրված հիպերսֆերային նորմալ բոլոր կոմպոնենտներն:

$$n^A h^{(s)}_{AA_2\ldots A_s}(u,x^\nu) \sim X^A(u,x^\nu)h^{(s)}_{AA_2\ldots A_s}(u,x^\nu) = 0 \tag{3.29}$$

- Հավելյալ a^A վեկտորը հաստատուն է հարթ տարածությունում:

$$\begin{aligned} a^A =& E^A_u(u,x)a^u(u,x^\nu) + E^A_\mu(u,x)a^\mu(u,x^\nu) \\ =& e^u\left(Ln^A(x)a^u(u,x) + e^A_\mu(x)a^\mu(u,x)\right) \end{aligned} \tag{3.30}$$

$$\partial_B a^A = 0, \tag{3.31}$$

[1] Որպեսզի հեշտ տարբերակենք a և X տարածություններն մենք օգտագործում ենք ∂_A տարածաժամանակային $\frac{\partial}{\partial X^A}$ ածանցյալների համար և ∂_a՝ a տարածությունում ածանցյալների համար:

իսկ AdS_{d+1}-ում ոչ, քանի որ հնարավոր չէ ստանալ հաստատուն կովարիանտ վեկտորներ կոր տարածություններում:

Այս ամենից կարելի է անել հետևություն, որ ԲՍ դաշտի անզացը իրենով բավարար չէ, որպեսզի կատարենք հաստատուն a^A վեկտորներով փաթաթված ածանցյալների փուլբեք անցում դեպի AdS_{d+1} տարածություն: Մյուս կողմից ունենք կորագիծ մետրիկա (3.16)-(3.18), որից կարող ենք հաշվել հակադարձ մետրիկան և հակադարձել Յակոբիանը (3.6)-(3.7)

$$G^{uu}(u,x) = -\frac{e^{-2u}}{L^2} \tag{3.32}$$

$$G^{\mu\nu}(u,x) = e^{-2u}g^{\mu\nu}(x) \tag{3.33}$$

$$E^u_A(u,x) = E^B_u(u,x)\eta_{AB}G^{uu}(u,x) = -\frac{e^{-u}}{L}n_A(x) \tag{3.34}$$

$$E^\mu_A(u,x) = E^B_\nu(u,x)\eta_{AB}G^{\mu\nu}(u,x) = e^{-u}e^\mu_A(x), \tag{3.35}$$

որտեղ $g^{\mu\nu}(x)$-ն AdS_{d+1}- հակադարձ մետրիկան է և $e^\mu_A(x) = e^B_\nu(x)\eta_{AB}g^{\mu\nu}(x)$. Այս ամենը նկատի ունենալով հարթ տարածության ածանցյալը կորդինատական ձևափոխություններից հետո կնդունի հետևյալ տեսքը՝

$$\partial_A = E^u_A(u,x)\partial_u + E^\mu_A(u,x)\partial_{x^\mu} = -\frac{e^{-u}}{L}n_A(x)\partial_u + e^{-u}e^\mu_A(x)\partial_{x^\mu} \tag{3.36}$$

Այժմ տեղադրենք ստացվածը (3.31)-ի մեջ և հաշվի առնելով (3.30), (3.19) և (3.20) կստանանք հետևյալ չորս առնչություններն $a^u(u,x), a^\mu(u,x)$ կոմպոնենտների համար:

$$\partial_u a^u(u,x) + a^u(u,x) = 0 \tag{3.37}$$

$$\partial_u a^\mu(u,x) + a^\mu(u,x) = 0 \tag{3.38}$$

$$\partial_\mu a^u(u,x) + \frac{1}{L^2}a_\mu(u,x) = 0 \tag{3.39}$$

$$\nabla_\mu a^\nu(u,x) + \delta^\nu_\mu a^u(u,x) = 0 \tag{3.40}$$

Առաջին երկու հավասարումներն լուծվում են անմիջապես՝

$$a^u(u,x) = e^{-u}a^u(x) \tag{3.41}$$

$$a^\mu(u,x) = e^{-u}a^\mu(x) \tag{3.42}$$

Տեղադրելով այս լուծումներն (3.30)-ում և օգտագործելով (3.29) պայմանը, կորագիծ կորդինատներով անզացը կնդունի հետևյալ տեսքը՝

$$\begin{aligned} h^{(s)}(X,a^B) &= h^{(s)}_{A_1A_2\ldots A_s}(X)a^{A_1}a^{A_2}\ldots a^{A_s}|_{X^A=(u,x^\mu),n^Ah^{(s)}_{A\ldots}=0} \\ &= h^{(s)}_{\mu_1\mu_2\ldots\mu_s}(u,x)a^{\mu_1}(x)a^{\mu_2}(x)\ldots a^{\mu_s}(x) = h^{(s)}(u,x,a^\mu(x)) \end{aligned} \tag{3.43}$$

որտեղ

$$h^{(s)}_{\mu_1\mu_2\ldots\mu_s}(u,x) = h^{(s)}_{A_1A_2\ldots A_s}(u,x)e^{A_1}_{\mu_1}(x)e^{A_2}_{\mu_1}(x)\ldots e^{A_s}_{\mu_s}(x) \tag{3.44}$$

Ստացվածը s սպինով թենզորական դաշտի $d+2$ չափանի փարածությունից AdS_{d+1} փարածություն անցնելու ճիշտ փուլբեք պրոցեդուրան է: Միակ կախումը հարթ փարածության կորդինատներից (3.44)-ում է:

s սպինով դաշտի զրո կարգի տրամաչափային վարիացիան ունի հետևյալ տեսքը՝

$$\delta_{(0)}h^{(s)}(X^A;a^A) = s(a^A\partial_A)\epsilon^{(s-1)}(X^A;a^A), \tag{3.45}$$

որտեղ տրամաչափային պարամետրը անհետք է, իսկ դաշտը կրկնակի անհետք:

$$\Box_{a^A}\epsilon^{(s-1)}(X^A;a^A) = 0, \tag{3.46}$$

$$\Box^2_{a^A}h^{(s)}(X^A;a^A) = 0 \tag{3.47}$$

Միավորելով (3.30) և (3.36) ու հաշվի առնելով (3.42) կստանանք՝

$$a^A\partial_A\epsilon^{(s-1)}(X^A;a^A) = e^{-u}\left(a^u(x)\partial_u + a^\mu(x)\partial_{x^\mu}\right)\epsilon^{(s-1)}(u,x;a^\mu(x)) \tag{3.48}$$

որտեղ $\epsilon^{(s-1)}(X^A;a^A)$ պարամետրը բավարարում է նույն անզացին ինչ որ $h^{(s)}(X^A;a^A)$ ՝ (3.43)-ում:

$$\epsilon^{(s-1)}(X^A;a^A) = \epsilon^{(s-1)}(u,x;a^\mu(x)) \tag{3.49}$$

Հաջորդ կարևոր դիտարկումներն կապված են $\partial_{x^\mu} \equiv \partial_\mu$ ածանցյալների հետ՝ AdS_{d+1}-ում, x^μ կորդինատներով:

- Մենք համապատասխանության մեջ ենք դրել հարթ փարածության մեջ որոշված սկալյար օբյեկտը (որը X կորդինատներից կախված թենզորի և հաստատուն a^A վեկտորների փաթույթ է) կոր փարածությունում որոշված սկալյար օբյեկտի հետ (որը որ x կորդինատներից կախված վեկտոր է՝ փաթաթված x-ից կախված $a^\mu(x)$ վեկտորների հետ): Արդյունքում (3.48)-ի աջ կողմում ստանում են սովորական ածանցյալ՝ ∂_{x^μ}

- Որպեսզի տեսնենք AdS_{d+1}-ում կովարիանտ ածանցյալի տեսքը, պետք է օգտագործենք Լեյբնիցի կանոնը կոր փարածությունում և (3.39), (3.40):

$$\begin{aligned}\partial_{x^\mu}(T_\nu(x)a^\nu(x)) &= \nabla_\mu T_\nu(x)a^\nu(x) + T_\nu(x)\nabla_\mu a^\nu(x) \\ &= (\nabla_\mu T_\nu(x))a^\nu(x) - T_\mu(x)a^u(x) = (\nabla_\mu T_\nu(x))a^\nu(x) - a^u(x)\frac{\partial}{\partial a^\mu}(T_\nu(x)a^\nu)\end{aligned} \tag{3.50}$$

Այս օրինակից կարող ենք տեսնել, որ x-ից կախյալ վեկտորների փոխարեն կարող ենք օգտագործել x-ից կախում չունեցող a^μ վեկտորներ(ինչպես նաև a^u կոմպոնենտը) և բաժանել AdS տարածությունը a^μ տարածությունից: Վերջինս իրագործելու համար (3.50)-ին համապատասխան պետք է փոխարինենք սովորական ածանցյալներն հետևյալ օպերատորներով Փրենե բազիսում՝

$$\partial_A \quad => \quad (e^{-u}\partial_u, e^{-u}\partial_\mu), \tag{3.51}$$

$$\partial_\mu \quad => \quad D_\mu = \nabla_\mu - a^u\partial_{a^\mu} - \frac{a_\mu}{L^2}\partial_{a^u}, \tag{3.52}$$

որտեղ ∇_μ-ն AdS-ի կովարիանտ ածանցյալն է կառուցված այդ տարածության Կրիստոֆելի սիմվոլներով (3.12)

$$\nabla_\mu h^{(s)}(u,x;a) = \nabla_\mu h_{\mu_1\mu_2\ldots\mu_s}(u,x)a^{\mu_1}a^{\mu_2}\ldots a^{\mu_s}. \tag{3.53}$$

Օգտագործելով վերը ստացածները (3.48) ներկայացնենք հետևյալ կերպ՝

$$a^A\partial_A\epsilon^{(s-1)}(X^A;a^A) = e^{-u}\left(a^u\partial_u + a^\mu D_\mu\right)\epsilon^{(s-1)}(u,x;a^\mu)$$
$$= e^{-u}\left[a^u(\partial_u - s + 1) + a^\mu\nabla_\mu\right]\epsilon^{(s-1)}(u,x;a^\mu) \tag{3.54}$$

Այնուհետև u կախվածության վրա դնենք հետևյալ պայմաններն դաշտերի և պարամետրերի համար՝

$$h^{(s)}(u,x^\mu;a^\mu) = e^{\Delta_h u}h^{(s)}(x^\mu;a^\mu), \tag{3.55}$$

$$\epsilon^{(s-1)}(u,x^\mu;a^\mu) = e^{\Delta_\epsilon u}\epsilon^{(s-1)}(x^\mu;a^\mu), \tag{3.56}$$

և օգտագործելով (3.45) կստանանք՝

$$e^{\Delta_h u}\delta h^{(s)}(x^\mu;a^\mu) = e^{(\Delta_\epsilon-1)u}s\left[a^u(\Delta_\epsilon - s + 1) + a^\mu\nabla_\mu\right]\epsilon^{(s-1)}(x;a^\mu). \tag{3.57}$$

Ստացվեց որ, որպեսզի AdS_{d+1}-ում ստանանք d+2-ի (3.45) տրամաչափային ձևափոխությունը պետք է օգտագործենք՝

$$\delta h^{(s)}(x^\mu;a^\mu) = sa^\mu\nabla_\mu\epsilon^{(s-1)}(x;a^\mu) \tag{3.58}$$

և պետք է ֆիքսենք անզացի վերջին ազատ պարամետրը՝

$$\Delta_\epsilon = s - 1 \tag{3.59}$$

$$\Delta_h = \Delta_\epsilon - 1 = s - 2 \tag{3.60}$$

Վերջինս համաձայնության մեջ է [42]-[45]:

Ամփոփելով այս ամենը, ռադիալ պրոեկտման ($Radial \quad pullback$) մեթոդը կարելի է գրել հետևյալ կերպ՝

1. Բացել բոլոր a^A վեկտորներն օգտագործելով AdS-ի Ֆրենե բազիսը համաձայն (3.30)-ի և հաշվի առնել u-ից (3.41)-(3.42)-ի կախվածություններն ներդրված հիպերսֆերայի նորմալ և տանգենցյալ բաղադրիչների համար (որոնք որ ստացվում են (3.31)-ից) և վերը նկարագրված x^μ-ից անկախ լինելու փաստը: Վերջապես ունենք հետևյալ ներդրման կանոնը՝

$$a^A => Ln^A(x)a^u + e^A_\mu(x)a^\mu \tag{3.61}$$

2. Փոխարինել բոլոր ածանցյալներն հետևյալ կերպ՝

$$\partial_A => e^{-u}\left(-\frac{n_A(x)}{L}\partial_u + e^\mu_A(x)D_\mu\right) \tag{3.62}$$

որտեղ D_μ սահմանված է՝ (3.52)-ում:

3. Ֆիքսել u պարամետրը տրամաչափային դաշտի և իր պարամետրի համար հետևյալ կերպ՝ (3.59)-(3.60), որպեսզի պահպանվի տրամաչափային ինվարիանտությունը ռադիալ պրոեկտման ($Radial \quad pullback$) ժամանակ:

$d+2$ չափանի տրամաչափային ինվարիանտ Ֆրոնզդալի թենզորը ունի հետևյալ տեսքը՝

$$\begin{aligned}\mathcal{F}^{(s)}(X^A;a^A) \qquad &= \Box_{d+2}h^{(s)}(X^A;a^A) - a^A\partial_A\Big(\partial^B\partial_{a^B}h^{(s)}(X^A;a^A) \\ &-\frac{1}{2}(a^B\partial_B)\Box_{a^A}h^{(s)}(X^A;a^A)\Big),\end{aligned} \tag{3.63}$$

իսկ AdS_{d+1}-ում այն կնդունի հետևյալ տեսքը՝

$$\begin{aligned}&\mathcal{F}^{(s)}(x;a^\mu) = \Box_{d+1}h^{(s)}(x^\mu;a^\mu) \\ &-(a^\mu\nabla_\mu)\Big[(\nabla^\nu\partial_{a^\nu})h^{(s)}(x;a^\mu) - \frac{1}{2}(a^\nu\nabla_\nu)\Box_{a^\mu}h^{(s)}(x;a^\mu)\Big] \\ &-\frac{1}{L^2}[s^2+s(d-5)-2(d-2)]h^{(s)}(x^\mu;a^\mu)) - \frac{1}{L^2}a^\mu a_\mu\Box_{a^\mu}h^{(s)}(x^\mu;a^\mu).\end{aligned} \tag{3.64}$$

Վերջիններս կապված են հետևյալ օրենքով՝

$$\mathcal{F}^{(s)}(X^A;a^A) \quad = \quad e^{(s-4)u}\mathcal{F}^{(s)}(x;a^\mu), \tag{3.65}$$

Օգտագործելով ստացվածը (3.55)-ի և (3.60)-ի հետ, ինտեգրման ծավալի համար կստանանք՝

$$\int d^{d+2}X = \int dud^{d+1}x\sqrt{-G} = L\int dud^{d+1}x\sqrt{g}e^{(d+2)u} \tag{3.66}$$

Ֆրոնզդալի գործողության համար կստանանք հետևյալը՝

$$S_0[h^{(s)}(X^A;a^A)] \quad = \quad \left[L\int due^{(d+2s-4)u}\right] \times S_0[h^{(s)}(x^\mu;a^\mu)], \tag{3.67}$$

որտեղ

$$
\begin{aligned}
S_0[h^{(s)}(X^A;a^A)] &= \int d^{d+2}X\Big[-\frac{1}{2}h^{(s)}(X^A;a^A) *_{a^A} \mathcal{F}^{(s)}(X^A;a^A) \\
&+ \frac{1}{8s(s-1)}\Box_{a^A}h^{(s)}(X^A;a^A) *_{a^A} \Box_{a^A}\mathcal{F}^{(s)}(X^A;a^A)\Big] \qquad (3.68)\\
S_0[h^{(s)}(x^\mu;a^\mu)] &= \int d^{d+1}x\sqrt{g}\Big[-\frac{1}{2}h^{(s)}(x;a^\mu) *_{a^\mu} \mathcal{F}^{(s)}(x;a^\mu) \\
&+ \frac{1}{8s(s-1)}\Box_{a^\mu}h^{(s)}(x;a^\mu) *_{a^\mu} \Box_{a^\mu}\mathcal{F}^{(s)}(x;a^\mu)\Big], \qquad (3.69)
\end{aligned}
$$

4 ԲՍ դաշտերի ածանցյալների փուլբեքը հարթ փարածությունից AdS_{d+1}

Այս բաժնում կքննարկենք խորանարդային փոխազդեցության համար ռադիալ պրոեկտումը ($Radial \quad pullback$) կովարիանտ «օֆֆ-շելլ» մեթոդով նկարագրված՝ [31],[32]: Այս արդյունքը համաձայնության մեջ է Մեցսաեվի արդյունքների հետ [18]: Ավելին, այս արդյունքն հաստատում է, որ ԲՍ դաշտերի բոլոր փոխազդեցություններն կամայական սպինների համար s_1, s_2, s_3՝ հարթ, dS և AdS փարածություններում միառժեք են մասնակի ածանցյալների և դաշտի վերանշանակման ճշտությամբ: [46] աշխատանքում ուսումնասիրվել է փոխազդեցության հիմնական անդամի կապը՝ $d+2$ և AdS_{d+1} փարածություններում արտահայտված AdS-ի կովարիանտ ածանցյալներով ու կորության ուղղումներով՝ անտեսելով բոլոր հետքերն և դիվերգենցիաներն: Այս աշխատանքում անում ենք մեկ քայլ առաջ՝ ամբողջությամբ լուծելով խնդիրը հարթ փարածության հիմնական անդամի համար ներառյալ հետքերն և մնացած անդամներն, որոնք առաջանում են փոխազդեցության հիմնական անդամից:

$$
\begin{aligned}
&\mathcal{L}_I^{main}(h^{(s_1)}(X,a^A),h^{(s_2)}(X,b^A),h^{(s_3)}(X,c^A)) = \\
&\sum_{Q_{ij}} C^{s_1,s_2,s_3}_{Q_{12},Q_{23},Q_{31}} \int d^{d+2}X *_{c^A}^{Q_{31}+n_3} K^{(s_1)}(Q_{31},n_3;c^A,a^A;X) \\
&*_{a^A}^{Q_{12}+n_1} K^{(s_2)}(Q_{12},n_1;a^A,b^A;X) *_{b^A}^{Q_{23}+n_2} K^{(s_3)}(Q_{23},n_2;b^A,c^A;X),
\end{aligned}
\tag{4.1}
$$

որտեղ

$$
K^{(s_1)}(Q_{12},n_1;a^A,b^A;X) = (a^A\partial_{b^A})^{Q_{12}}(a^B\partial_B)^{n_1}h^{(s_1)}(X;b^C). \tag{4.2}
$$

Այս տեսքի հիմնական առավելությունն այն է, որ խորանարդային փոխազդեցությունը ներկայացվում է, որպես վերը նշված բի-թենզորի խորանարդի ցիկլիկ ինդեքսների փաթույթով: Սկսած այստեղից բոլոր տեղերում կտեղադրենք AdS-ի շառավիղը՝ $L=1$ և կօգտագործենք հետևյալ $(\ldots,\ldots)$ փակագծերն AdS_{d+1} ինդեքսների գումարի համար: Այլ կերպ ասած՝

$$
(a,\partial_b) = a^\mu \partial_{b^\mu}, \tag{4.3}
$$

$$
(a,\nabla) = a^\mu \nabla_\mu, \tag{4.4}
$$

և

$$
(a,D) = a^\mu D_\mu. \tag{4.5}
$$

Քանի որ այստեղ մինիմալ օբյեկտը բի-թենզոր է (4.2), որը ունի սիմետրիկ ինդեքսների երկու հավաքածու, պետք է սահմանել կովարիանտ դիֆերենցման օպերատորներ ինդեքսների երկու հավաքածուների համար՝

$$D_\mu = \nabla_\mu - a^u\partial_{a^\mu} - a_\mu\partial_{a^u} - b^u\partial_{b^\mu} - b_\mu\partial_{b^u}. \tag{4.6}$$

Այժմ կարող ենք սկսել հետազոտել Լագրանժիանի (4.1) u կախվածությունը կորագիծ կորդինատներով (3.3): Ստացվում է՝

$$d + 2 + \sum_{i=1}^{3}(\Delta_{h^{(s_i)}} - n_i) = \sum_{i=1}^{3}(s_i) - \Delta + d - 4, \tag{4.7}$$

որտեղ Δ-ն փոխազդեցության մեջ ածանցյալների քանակն է: Ավելացնելով մինիմալ քանակի ածանցյալներ, տեսնում ենք որ փոխազդեցությունը մասշտաբը փոխում է ինչպես՝

$$\sum_{i=1}^{3} s_i - \Delta_{min} + d - 4 = d + 2s - 4 \tag{4.8}$$

Ոչ կոմուտատիվ հանրահաշիվը և a^u-ների կրճատումը

Այս ենթաբաժնի մեջ կդիտարկենք փոխազդեցության հիմնական անդամի (4.1) «ռադիալ փուլբեքը»:

$$K^{(s)}(Q, n; a^A, b^A; X) = (a^A\partial_{b^A})^Q(a^B\partial_B)^n h^{(s)}(X; b^C). \tag{4.9}$$

Այս բի-թենզորային անդամը կգեներացնի AdS-ում կորության բոլոր ուղղումներն որոնք որ կառաջանան հիմնական անդամից: Դիտարկենք օպերատորներն այն ներկայացմամբ, որոնք որ ազդում են պրոեկտված ԲՍ դաշտի վրա՝

$$h^{(s)}(X; b^A)|_{X=X(u,x)} = h^{(s)}(u, x^\mu; b^\mu) = e^{(s-2)u}h^{(s)}(x^\mu; b^\mu). \tag{4.10}$$

Որպեսզի ստանանք AdS-ում ուղղումներն բացենք բոլոր $d+2$ չափանի օբյեկտներն Փրենե բազիսով և կիրառենք անզացի կանոններն՝

$$(a^B\partial_B)^n|_{X=X(u,x)} = \left[e^{-u}(a^u\partial_u + a^\mu D_\mu)\right]^n \tag{4.11}$$

$$a^\mu D_\mu = (a, D) = (a, \nabla) - a^u(a, \partial_a) - b^u(a, \partial_b) - a^2\partial_{a^u} - (a, b)\partial_{b^u} \tag{4.12}$$

$$\text{ուերե} \qquad a^2 = (a, a) = a^\mu a^\nu g_{\mu\nu}(x)$$

այնուհետև փաթաթենք a^u, b^u, c^u:

Այսինքն գործ ենք ունենալու $d+2$ չափանի n-րդ կարգի ածանցյալի (4.11) $d+1$ չափանի վերլուծության հետ, որտեղ՝

$$\begin{aligned} a^u\partial_u + a^\mu D_\mu &= a^\mu \hat{\nabla}_\mu(g) - R, && (4.13)\\ \hat{\nabla}_\mu &= \nabla_\mu - b^u\partial_{b^\mu} - b_\mu\partial_{b^u}, && (4.14)\\ R &= a^u[(a\partial_a) - \partial_u] + a^2\partial_{a^u}, && (4.15)\end{aligned}$$

օպերատորներն ազդում են (4.10) զրոյական վիճակների վրա , որոնք որ անհիհիլացվում են հետևյալ օպերատորներով՝

$$| \, 0 >= e^{(s-2)u} h^{(s)}(x^\mu; b^\mu) \tag{4.16}$$

$$\partial_{a^\mu} \mid 0 >= \partial_{a^u} \mid 0 >= \partial_{b^u} \mid 0 >= 0, \tag{4.17}$$

$$R \mid 0 >= (2-s)a^u \mid 0 > . \tag{4.18}$$

Մեզ հետաքրքրող օպերատորն է՝

$$\left[e^{-u}(a, \hat{\nabla}) - e^{-u}R\right]^n, \tag{4.19}$$

որտեղ՝

$$R = a^u[(a\partial_a) + a^u\partial_{a^u} - \partial_u] + (a^2 - (a^u)^2)\partial_{a^u} \tag{4.20}$$

$$[(a\partial_a) + a^u\partial_{a^u}, R] = R, \tag{4.21}$$

$$[(a\partial_a) + a^u\partial_{a^u}, (a, \hat{\nabla})] = (a, \hat{\nabla}), \tag{4.22}$$

$$[R, e^{-u}(a, \hat{\nabla})] = 2e^{-u}a^u(a, \hat{\nabla}). \tag{4.23}$$

Մենք պետք է հաշվենք (4.19)-ը (4.16) զրոյական վիճակի վրա: Դրա համար վերլուծենք (4.19) օպերատորը ոչ կոմուտատիվ բինոմական շարքի՝

$$\begin{aligned} &[(a, e^{-u}\hat{\nabla}) - e^{-u}R]^n \mid 0 >= \sum_{p=0}^{n} (-1)^p \\ &\sum_{n-p \geq i_p \geq i_{p-1} \geq i_{p-2} \dots \geq i_1 \geq 0} (a, e^{-u}\hat{\nabla})^{n-p-i_p} e^{-u} R (a, e^{-u}\hat{\nabla})^{i_p - i_{p-1}} \dots e^{-u} R (a, e^{-u}\hat{\nabla})^{i_1} \mid 0 > . \end{aligned} \tag{4.24}$$

Այնուհետև օգտագործելով

$$[R, (a, e^{-u}\hat{\nabla})^{i_k}] = 2i_k e^{-i_k u} a^u (a, \hat{\nabla})^{i_k}, \tag{4.25}$$

(4.24) -ը կարող ենք գրել հետևյալ տեսքով՝

$$[(a, e^{-u}\hat{\nabla}) - e^{-u}R]^n \mid 0 >= \sum_{p=0}^{n}(-1)^p(a,\hat{\nabla})^{n-p}e^{(p-n)u}$$
$$\sum_{n-p\geq i_p\geq i_{p-1}\geq i_{p-2}...\geq i_1\geq 0} e^{-u}(2i_pa^u+R)e^{-u}(2i_{p-1}a^u+R)...e^{-u}(2i_1a^u+R)e^{(s-2)u}h^{(s)}(x^\mu;b^\mu). \tag{4.26}$$

Ներկայացնելով հետևյալ նոր օբյեկտներն՝

$$\phi_{i_k} = 2i_ka^u + R = a^u[2i_k + (a,\partial_a) + a^u\partial_{a^u} - \partial_u] + [a^2 - (a^u)^2]\partial_{a^u}. \tag{4.27}$$

և հաշվի առնելով

$$[(a,\partial_a) + a^u\partial_{a^u} - \partial_u]e^{-nu}f^{(m)}(a^\mu, a^u) = (m+n)e^{-nu}f^{(m)}(a^\mu, a^u), \tag{4.28}$$

կստանանք՝

$$[(a, e^{-u}\hat{\nabla}) - e^{-u}R]^n \mid 0 >= e^{(s-2-n)u}\sum_{p=0}^{n}(-1)^p(a,\hat{\nabla})^{n-p}$$
$$\sum_{n-p\geq i_p\geq i_{p-1}\geq i_{p-2}...\geq i_1\geq 0} \phi_{i_p}\phi_{i_{p-1}}\dots\phi_{i_2}\phi_{i_1}h^{(s)}(x^\mu;b^\mu), \tag{4.29}$$

որտեղ ϕ_{i_k} և «ծնման» օպերատորներն են

$$\phi_{i_k} = a^u[2(i_k+k) - s] + [a^2 - (a^u)^2]\partial_{a^u}. \tag{4.30}$$

Այժմ ցույց տանք թե ինչպես կարելի է հաշվել (4.29) գումարը և ստանալ անհրաժեշտ վերլուծությունը a^u-ի աստիճաններով: Կատարենք նշանակում՝

$$V^{p+1}(i_{p+1})h^{(s)}(x^\mu;b^\mu) = \sum_{i_{p+1}\geq i_p\geq i_{p-1}\geq i_{p-2}...\geq i_1\geq 0}\phi_{i_p}\phi_{i_{p-1}}\dots\phi_{i_2}\phi_{i_1}h^{(s)}(x^\mu;b^\mu), \tag{4.31}$$

հաշվելով $\{i_k\}|_{k=1}^{p}$ ինդեքսներով գումարը կստանանք a^u և (a^2) փոփոխականներով բազմանդամ [2]

$$V^{p+1}(i_{p+1}) = \sum_{k=0}^{[\frac{p}{2}]}\xi_k^{p+1}(i_{p+1})(a^2)^k(a^u)^{p-2k}. \tag{4.32}$$

օգտագործելով ստացված արտահայտությունը որպես անզաց հետևյալ հավասարման համար՝

$$V^{p+1}(i_{p+1}) = \sum_{i_{p=0}}^{i_{p+1}}\phi_{i_p}V^p(i_p) \tag{4.33}$$

[2] $[p/2]$-ը $p/2$-ի ամբողջ մասն է և ամենավերջում պետք է տեղադրենք $i_{p+1} = n - p$

և օգտագործենք (4.30) մենք կստանանք հետևյալ ռեկուրենտ հավասարումը $2p-k$ կարգի բազմանդամների համար $\xi_k^{p+1}(i_{p+1}) \sim (i_{p+1})^{2p-k} + \dots$ գործակիցներով:

$$\xi_k^{p+1}(j) = \sum_{i=0}^{j}(2i+p+1+2k-s)\xi_k^p(i) + \sum_{i=0}^{j}(p+1-2k)\xi_{k-1}^p(i) \tag{4.34}$$

Հավասարումը ավելի հարմար է գրել «դիֆերենցյալ» տեսքով՝

$$\xi_k^{p+1}(i) - \xi_k^{p+1}(i-1) = (2i+p+1+2k-s)\xi_k^p(i) + (p+1-2k)\xi_{k-1}^p(i) \tag{4.35}$$

Հավելված 2-ում ներկայացված է, թե ինչպես ենք լուծել այս հավասարումը՝ օգտագործելով (4.31)-ը V^{p+1} անդամներն հաշվելու համար՝ $p=1,2,3,4,\dots$ դեպքերի համար: Ուսումնասիրելով ստացված անդամներն հանգում ենք $\xi_k^{p+1}(i)$-ի համար հետևյալ անզացին

$$\xi_k^{p+1}(i) = \frac{1}{(p-2k)!}(i+1)_p(2k+2+i-s)_{p-2k}P_k(i) \tag{4.36}$$

որտեղ $P_k(i) \sim i^k + \dots$-ն p- *ից անկախ* k-*րդ կարգի բազմանդամ է*: Այստեղ օգտագործեցինք Փոխհամերի սիմվոլներն ստացվածն ավելի կոմպակտ գրելու համար[3]

$$(a)_n = \frac{\Gamma(a+n)}{\Gamma(a)} = a(a+1)\dots(a+n-1) \tag{4.37}$$

Տեղադրելով (4.36)-ը (4.35) հավասարման մեջ ստանում ենք հավասարում $P_k(i)$-ի համար՝

$$(i+2k)P_k(i) - iP_k(i-1) = (i+2k-s)P_{k-1}(i) \tag{4.38}$$

կատարելով բազմանդամների հետևյալ նորմավորումն՝

$$\mathcal{P}_k(i) \equiv (i+1)_{2k}P_k(i) \tag{4.39}$$

ստանում ենք ավելի պարզ հավասարում և եզրային պայմաններ՝

$$\mathcal{P}_k(i) - \mathcal{P}_k(i-1) = (i+2k-1)(i+2k-s)\mathcal{P}_{k-1}(i) \tag{4.40}$$

$$\mathcal{P}_0(i) = P_0(i) = 1 \tag{4.41}$$

Վերջինս կարելի է լուծել երկու եղանակով: Առաջինը՝ ներկայացնելով ներդրված գումարների տեսքով՝

$$\mathcal{P}_k(i) = \sum_{i \geq i_k \geq i_{k-1} \geq i_{k-2} \dots \geq i_1 \geq 0} \prod_{n=1}^{k}(i_n+2n-1)(i_n+2n-s) \tag{4.42}$$

[3]նվազող փակտորյալի համար մենք օգտագործում ենք մեկ այլ նշանակում՝ $[s]_n = s(s-1)\dots(s-n+1)$

կամ լուծելով դիֆերենցյալ հավասարումը գեներացնող ֆունկցիայի համար՝

$$\mathcal{P}_k(y) \equiv \sum_{i=0}^{\infty} \mathcal{P}_k(i) y^i \tag{4.43}$$

Որտեղ ֆորմալ ձևով մցրել ենք y փոփոխկանը $|y| < 1$ պայմանով, որպեսի սպացվի սահմանա-յին պայմանը՝

$$\mathcal{P}_0(y) = \sum_{i=0}^{\infty} y^i = \frac{1}{1-y} \tag{4.44}$$

Այս գեներացնող ֆունկցիայի համար (4.40)-ից կսպանանք `

$$(1-y)\mathcal{P}_k(y) = (y\frac{d}{dy} + 2k - 1)(y\frac{d}{dy} + 2k - s)\mathcal{P}_{k-1}(y) \tag{4.45}$$

Լուծելով վերջինս ռեկուրենտ ձևով և օգտագործելով (4.44) լուծումը կարող են գրել հետևյալ պեսքով՝

$$\mathcal{P}_k(y) = y^{-(2k+1)} \left[\frac{y^4}{1-y}\frac{d}{dy}y^s\frac{d}{dy}y^{-s}\right]^k \frac{y^2}{1-y} \tag{4.46}$$

ԵՎ վերջապես (4.36)-ը

$$\xi_k^{p+1}(i) = \frac{1}{(p-2k)!}(2k+i+1)_{p-2k}(2k+2+i-s)_{p-2k}\mathcal{P}_k(i) \tag{4.47}$$

Ոչ կոմուտատիվ հանրահաշիվը և b^u-ների կրճատումը

Որպեսզի դուրս բերենք b^u-ից կախումը և սպանանք վերջնական արտահայտությունը արտա-հայտված AdS_{d+1}-ի ∇ կովարիանտ ածանցյալներով պետք է հաշվենք մնացած անդամներն՝

$$\begin{aligned}(a, \hat{\nabla})^{n-p} &= [(a, \nabla) - b^u(a, \partial_b) - (a, b)\partial_{b^u}]^{n-p} \\ &= \sum_{\tilde{p}=0}^{n-p} (-1)^{\tilde{p}} \binom{n-p}{\tilde{p}} (a, \nabla)^{n-p-\tilde{p}} (L^+ + L^-)^{\tilde{p}},\end{aligned} \tag{4.48}$$

որտեղ L^+, L^- գեներացնում են Լիի հանրահաշիվ՝

$$L^+ = b^u(a, \partial_b), \quad L^- = (a, b)\partial_{b^u}, \tag{4.49}$$

$$[L^+, L^-] = H = a^2 b^u \partial_{b^u} - (a, b)(a, \partial_b), \tag{4.50}$$

$$[H, L^\pm] = \pm 2a^2 L^\pm. \tag{4.51}$$

Այս Լիի հանրահաշվի ներկայացումներն սպացվում են $(s+1)$ չափանի «նուլ վեկտորների» վեկտորական տարածությունից $\{\Phi_n(a; b)\}|_{n=0}^s$

$$\Phi_n(a; b) = h^{(s)}_{\mu_1,\mu_2,\ldots\mu_s} a^{\mu_1} a^{\mu_2} \ldots a^{\mu_n} b^{\mu_{n+1}} b^{\mu_{n+2}} \ldots b^{\mu_s}, \qquad L^- \Phi_n(a; b) = 0, \tag{4.52}$$

(4.49)-(4.51)-ից հետևում է, որ սկսած $\Phi_0(a;b)$ ցանկացած $\Phi_n(a;b)$ կարելի է ստանալ ազդելով H օպերատորով:

$$H\Phi_0(a;b) = -s(a,b)\Phi_1(a,b), \tag{4.53}$$

$$H^2\Phi_0(a;b) = [s]_2(a,b)^2\Phi_2(a;b) + sa^2(a,b)\Phi_1(a;b), \tag{4.54}$$

$$H^3\Phi_0(a;b) = -\{[s]_3(a,b)^3\Phi_3(a;b) + 3[s]_2a^2(a,b)^2\Phi_2(a;b) + s(a^2)^2(a,b)\Phi_1(a;b)\}. \tag{4.55}$$

Օգտագործելով հետևյալ անզացը՝

$$H^n\Phi_0(a;b) = (-1)^n\sum_{r=1}^{n} A_r^{(n)}[s]_r(a^2)^{n-r}(a,b)^r\Phi_r(a;b), \tag{4.56}$$

ստանում ենք ռեկուրենտ հավասարումը՝

$$A_{r-1}^{(n)} + rA_r^{(n)} = A_r^{(n+1)}, \tag{4.57}$$

$$A_r^{(n)} = 0 \quad \text{երբ} \quad r > n. \tag{4.58}$$

Որպես եզրային պայմաններ վերցված են՝ $A_{-1}^{(n)} = 0$, $A_0^{(0)} = 1$ Բազմապատկենք x^r-ով և մտցնենք՝

$$P_n(x) = \sum_{r=0}^{\infty} A_r^{(n)}x^r \tag{4.59}$$

կստանանք ավելի պարզ ռեկուրենտ հավասարում՝

$$x\frac{d}{dx}\left(e^xP_n(x)\right) = e^xP_{n+1}(x)\,. \tag{4.60}$$

որը որ հեշտությամբ կլուծվի քանի որ $P_0(x) = 1$: n անգամ իտերացիա անելով կստանանք՝

$$e^xP_n(x) = \left(x\frac{d}{dx}\right)^n e^x\,, \tag{4.61}$$

կամ

$$P_n(x) = e^{-x}\left(x\frac{d}{dx}\right)^n e^x\,. \tag{4.62}$$

$P_n(x)$-ը n-րդ կարգի բազմանդամ է, որը նշանակում է որ $A_r^{(n)} = 0$ երբ $r > n$:

Գեներացնող ֆունկցիան ստանալու համար մցնենք՝

$$Q(x,t) = \sum_{n=0}^{\infty} P_n(x)\,\frac{t^n}{n!} \tag{4.63}$$

$$Q(x,t) = e^{-x}e^{tx\frac{d}{dx}}e^x = e^{x(e^t-1)} \tag{4.64}$$

$\{\Phi_n(a;b)\}_{n=0}^{s}$ վեկտորների բազիսը օգտագործելով Լիի հանրահաշիվը կկառուցվի հետևյալ կերպ՝

$$(L^+ + L^-)^{\tilde{p}}\Phi_0(b) = \sum_{\tilde{k}=0}^{\tilde{p}} \sum_{\tilde{p}-\tilde{k}\geq i_{\tilde{k}}\geq i_{\tilde{k}-1}\geq i_{\tilde{k}-2}...\geq i_1\geq 1}$$

$$(L^+)^{\tilde{p}-\tilde{k}-i_{\tilde{k}}} L^-(L^+)^{i_{\tilde{k}}-i_{\tilde{k}-1}} L^-(L^+)^{i_{\tilde{k}-1}-i_{\tilde{k}-2}} L^- ...(L^+)^{i_2-i_1} L^-(L^+)^{i_1}\Phi_0(b). \tag{4.65}$$

Առաջանում են միայն L^--ով և L^+-ի աստիճաններով կոմուտատորներ:

$$[L^-,(L^+)^i] = -\sum_{j=0}^{i-1}(L^+)^{i-j-1}H(L^+)^j =$$

$$-\sum_{j=0}^{i-1}(L^+)^{i-1}(H+2ja^2) = -(L^+)^{i-1}(iH+[i]_2\, a^2). \tag{4.66}$$

Ամբողջ «նոլ վեկտորների» $\{\Phi_n(a;b)\}$ բազիսը կառուցվում է $\Phi_0(b)$-ի վրա ազդելով H օպերատորով

$$\psi_i = iH + [i]_2\, a^2, \tag{4.67}$$

արդյունքում

$$\sum_{\tilde{k}=1}^{[\frac{\tilde{p}}{2}]}(-1)^{\tilde{k}}(L^+)^{\tilde{p}-2\tilde{k}}W^{\tilde{k}}(a^2,H)\Phi_0(b) = \sum_{\tilde{k}=1}^{[\frac{\tilde{p}}{2}]}(b^u)^{\tilde{p}-2\tilde{k}}(-1)^{\tilde{k}}(a,\partial_b)^{\tilde{p}-2\tilde{k}}W^{\tilde{k}}(a^2,H)\Phi_0(b) \tag{4.68}$$

որտեղ

$$W^{\tilde{k}}(a^2,H,i_{\tilde{k}+1})\Phi_0(b) = \sum_{i_{\tilde{k}+1}\geq i_{\tilde{k}}\geq i_{\tilde{k}-1}\geq i_{\tilde{k}-2}...\geq i_2\geq i_1\geq 1} \psi_{i_{\tilde{k}}-\tilde{k}+1}\psi_{i_{\tilde{k}-1}-\tilde{k}+2}\psi_{i_{\tilde{k}-2}-\tilde{k}+3}...\psi_{i_2-1}\psi_{i_1}\Phi_0(b). \tag{4.69}$$

Այս գումարը $\tilde{k}$-րդ կարգի բազմանդամ է H-ից և a^2-ից:

$$W^{\tilde{k}}(a^2,H,i_{\tilde{k}+1}) = \sum_{m=0}^{\tilde{k}} \eta_{\tilde{k}}^m(i_{\tilde{k}+1})(a^2)^m H^{\tilde{k}-m} \tag{4.70}$$

Ինչպես և (4.32)-ում անյպես էլ այստեղ օգտագործելով այս անզացը հետևյալ ռեկուրենտ հավասարման համար

$$W^{\tilde{k}+1}(a^2,H,i_{\tilde{k}+2}) = \sum_{i_{\tilde{k}+1}=1}^{i_{\tilde{k}+2}} \psi_{i_{\tilde{k}+1}-\tilde{k}}W^{\tilde{k}}(a^2,H,i_{\tilde{k}+1}) \tag{4.71}$$

$$\eta_{\tilde{k}+1}^m(j) = \sum_{i=1}^{j}\left[(i-\tilde{k})\eta_{\tilde{k}}^m(i) + (i-\tilde{k})(i-\tilde{k}-1)\eta_{\tilde{k}}^{m-1}(i)\right] \tag{4.72}$$

կամ առանց գումարների՝

$$\eta^m_{\tilde{k}+1}(i) - \eta^m_{\tilde{k}+1}(i-1) = (i-\tilde{k})\eta^m_{\tilde{k}}(i) + (i-\tilde{k})(i-\tilde{k}-1)\eta^{m-1}_{\tilde{k}}(i) \tag{4.73}$$

Ուսումնասիրելով բազմանդամների գործակիցներն, տեսնում ենք որ հնարավոր է անել $i^{2\tilde{k}}$ անդամների ֆակտորիզացում հետևյալ կերպ՝

$$\eta^m_{\tilde{k}}(i) = \frac{2^{m-\tilde{k}}3^{-m}}{(\tilde{k}-m)!m!}(i-\tilde{k}+1)_{2\tilde{k}}P_m(i,\tilde{k}), \quad P_0(i,\tilde{k}) = 1 \tag{4.74}$$

որտեղ $P_m(i,\tilde{k}) \sim (i-\frac{\tilde{k}}{2})^m + \ldots$ բազմանդամներն m-րդ կարգի են i-ով և $\tilde{k}$-ով: Վերջիններս բավարարում են՝

$$(i+\tilde{k}+1)P_m(i,\tilde{k}+1)-(i-\tilde{k}-1)P_m(i-1,\tilde{k}+1) = 2(\tilde{k}-m+1)P_m(i,\tilde{k})+3m(i-\tilde{k}-1)P_{m-1}(i,\tilde{k}) \tag{4.75}$$

որը որ, բարդությամբ նույն կարգի է ինչ որ (4.73): Մյուս կողմից կարելի է հաշվել $\eta^m_{\tilde{k}}(i_{\tilde{k}+1})$ անմիջապես հաշվի առնելով (4.69): Համեմատելով (4.70)-ը (4.69)-ի հետ և նկատի ունենալով (4.67)-ը տեսնում ենք, որ այն հնարավոր է

$$\eta^m_{\tilde{k}}(\tilde{p}-\tilde{k}) = \eta^m_{\tilde{k}}(i_{\tilde{k}+1})|_{i_{\tilde{k}+1}=\tilde{p}-\tilde{k}} \tag{4.76}$$

գրել հետևյալ կերպ

$$\begin{aligned}\eta^m_{\tilde{k}}(\tilde{p}-\tilde{k}) = & \sum_{\tilde{p}-\tilde{k}\ge i_{\tilde{k}}\ge i_{\tilde{k}-1}\ge i_{\tilde{k}-2}\ldots\ge i_2\ge i_1\ge 1} \quad \sum_{\tilde{k}\ge n_m\ge n_{m-1}\ge n_{m-2}\ldots\ge n_2\ge n_1\ge 1} \\ & \prod_{l_m=n_m+1}^{\tilde{k}}(i_{l_m}-l_k+1)[i_{n_m}-n_m+1]_2 \prod_{l_{m-1}=n_{m-1}+1}^{n_m-1}(i_{l_{m-1}}-l_{m-1}+1)[i_{n_{m-1}}-n_{m-1}+1]_2\ldots \\ & \ldots\prod_{l_2=n_2+1}^{n_3-1}(i_{l_2}-l_2+1)[i_{n_2}-n_2+1]_2\prod_{l_1=n_1+1}^{n_2-1}(i_{l_1}-l_1+1)[i_{n_1}-n_1+1]_2\prod_{l=1}^{n_1-1}(i_l-l+1)\end{aligned} \tag{4.77}$$

Այս բանաձևը նշանակում է, որ $\eta^0_{\tilde{k}}(\tilde{p}-\tilde{k})$-ի արտահայտության մեջ

$$\eta^0_{\tilde{k}}(\tilde{p}-\tilde{k}) = \sum_{\tilde{p}-\tilde{k}\ge i_{\tilde{k}}\ge i_{\tilde{k}-1}\ge i_{\tilde{k}-2}\ldots\ge i_2\ge i_1\ge 1}\prod_{l=1}^{\tilde{k}}(i_l-l+1) \tag{4.78}$$

պետք է փոխարինենք m հատ փակագծերով $(i_{n_r}-n_r+1)|^m_{r=1}$, որոնք ունեն m Փոխհամերներ $\{[i_{n_r}-n_r+1]_2\}|^m_{r=1}$ բոլոր հնարավոր ձևերով, իսկ վերջում վերցնել գումար բոլորից:

5 Խորանարդային փոխազդեցության հիմնական անդամի պրոեկտումը $(pullback)$

Դիտարկենք խորանարդային ինքնափոխազդեցության հիմնական անդամը, որը որ ստացվում է (Ա.4)-(Ա.6)-ից դնելով՝

$$
\begin{aligned}
s_1 &= s_2 = s_3 = s, && (5.1)\\
\nu_1 &= \nu_2 = \nu_3 = 0, && (5.2)\\
Q_{23} &= n_1 = \alpha, && (5.3)\\
Q_{31} &= n_2 = \beta, && (5.4)\\
Q_{12} &= n_3 = \gamma. && (5.5)
\end{aligned}
$$

(4.1), (4.2)-ը ձևափոխվում են հատկյալ փրինոմիալ գործակիցներով, $(a)\alpha, (b)\beta, (c)\gamma$-ով ցիկլիկ արտահայտությանը՝

$$
\begin{aligned}
\mathcal{L}_I^{main} = & \sum_{\substack{\alpha,\beta,\gamma \\ \alpha+\beta+\gamma=s}} \binom{s}{\alpha,\beta,\gamma} \int d^{d+2}X \\
& *_a^{\gamma+\alpha} (a^A \partial_{b^A})^\gamma (a^B \partial_B)^\alpha h^{(s)}(X; b^C) \\
& *_b^{\alpha+\beta} (b^D \partial_{c^D})^\alpha (b^E \partial_E)^\beta h^{(s)}(X; c^F) \\
& *_c^{\beta+\gamma} (c^G \partial_{a^G})^\beta (c^H \partial_H)^\gamma h^{(s)}(X; a^K), \qquad (5.6)
\end{aligned}
$$

Նախորդ բաժնի հիմնական արդյունքն այն է, որ մենք այժմ կարող ենք բացել (5.6) -ի ամեն մի փողը և հանել մեջից a^u, b^u, c^u կախվածությունը, որը հնարավորություն կտա կատարելու ճիշտ փաթույթ AdS_{d+1}-ի կովարիանտ ածանցյալների և կորության ուղղումների լեզվով: Միավորելով (4.29)-(4.32) և (4.48)-(4.70) կստանանք՝

